№ 108 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 17 **1896** ԵՐԵՔՇԱԲԹԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 17 № 108

ՔՍԱՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Ցայտնի արութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Ցայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը՝ թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում 10 ռուբլի. տասն և մէկ և տասն ամսվանը՝ 9 ռ., ինն և ութ ամսվանը՝ 8 ռ., եօթ ամսվանը՝ 7 ռ., վեց ամսվանը՝ 6 ռ., հինգ ամսվանը՝ 5 ռ., չորս ամսվանը՝ 4 ռ., երեք ամսվանը՝ 3 ռ., երկու ամսվանը 2 ռ., ամսական՝ 1 ռուբլի։

Գրվել «ՄՇԱԿԻՆ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ։

Օտարաքաղաքացիները պէտք է դիմեն հետևեալ հասցէով՝ Тифлисъ. Редакція «МШАКЪ»։ Իսկ արտասահմանից՝ Tiflis. Rédaction «MSCHAK»։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հեռագիրներ. Պաշտօնական զօրումենտ. — —ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Շուշուց. Նամակ Նոր-Բայազէտից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին տեղեկութիւններ. Ռուսաց գործակալութեան հեռագիրներ. Նամակ Ցունաստանից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ԲՕՐՍԱ. — ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Տպաւորութիւններ Արևմուտքից.

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(Ռուսաց գործակալութեան)

—

Լոնդոն, 12 սեպտեմբերի։ Հայկական գազանութիւնների դէմ բողոքելու համար գումարված միտինգում Գլադստոն վստահութիւն յայտնեց, թէ մինիստրութիւնը ամեն ջանք գործ կը դնի Թիւրքաց քրիստոնեաների ապահովութիւնը երաշխաւորելու համար։ Գլադստոն մատնացոյց արաւ այն բանի վրա, թէ անհրաժեշտ է վերացնել ամեն տեսակ կուսակցական ոգի այդ հարցից. և անելով արդէն յայտնի յայտարարութիւնը, աւելացրեց. „ԵԹԷ անհնարին կը լինի առաջուց պետութիւնների համաձայնութիւնն առնել, այն ժամանակ Անգլիան իրաւունք կունենայ սպառնալ սուլթանին ստիպողական միջոցներով։ Այդ դեռ չէ նշանակում, թէ մի այդպիսի սպառնալիք պատերազմ կառաջացնէր։ Ես յոյս ունեմ, որ Անգլիան հարկադրված չի լինի մենակ գործել, և երբէք մոքովս չի անցնի, որ Անգլիան հրաժարվէր իր իրաւունքից։ Առաջին քայլը այդ ուղղութեամբ պէտք է լինի անգլիական դեսպանին յետ կանչելը Կ. Պոլսից և անցագիրներ տալը Լոնդոնի Թիւրքաց դեսպանին։ Երբ այդ արված, վերջացած կը լինի, հնարաւոր կը լինի ազատ կերպով քննել, թէ ինչ պէտք է յետոյ անել։ Ես կարծում եմ, որ ոչ մէկ եւրոպական պետութիւն պատերազմ չի սկսի նրա համար, որպէս զի երաշխաւորել կոտորածի շարունակութիւնը“։ Ապա Գլադստոնի բանաձևը ընդունվեց միաձայն։ Ազդարարութիւնը ոգևորված ցոյցեր արաւ Գլադստոնին։

Լոնդոն, 12 սեպտեմբերի։ Գլադստոնի ճառի առիթով „Times“ ասում է, որ ոչ մի խոհեմ քաղաքագէտ չէ կարող Գլադստոնի առաջարկութիւնն ընդունել, այն է— սպառնալ Թիւրքիային բռնի միջոցներով, երբ ամենքը գիտեն, որ Անգլիան յետ կը քաշվի պատերազմի դէպքում։

„Daily News“ ասում է, որ դեսպանին յետ կանչելով քրիստոնեաների կոտորածի պատասխանատուութիւնը կընկնէր այն պետութիւնների վրա, որոնք կը հրաժարվեին այդ միջոցից։ Դա միակ միջոցն է, որը կարող կը լինի միջազգային պատիւը պաշտպանել։

„Standard“ հարցնում է. „Դեսպանին յետ կանչելով ի՞նչ շահ կը ստանան Անգլիան, Թիւրքիան կամ հայերը։ Միւս պետութիւնները կը թողնէին իրանց ներկայացուցիչներին իրանց տեղերում։“

„Daily Telegraph“ նոյն միաքն է յայտնում և հաղորդում է, որ Թիւրքաց դեսպանութիւնը երէկ երեկոյեան Կ. Պոլիս ուղարկեց Գլադստոնի ճառի լիակատար բնագիրը։

Լոնդոն, 14 սեպտեմբերի։ „Times“ լրագրին հաղորդում են Կ. Պոլսից. „Եգինա (Ակն) քաղաքը ամբողջովին այրվեց։ Կէսարիայում և Գեմերիկում կոտորած եղաւ։ Խարբերդն ևս ամբողջովին կրակի մէջ է։ Շատ մահմեդականներ տանում են իրանց ընտանիքները Կ. Պոլսից։

„Daily News“ լրագրին Կ. Պոլսից հեռագրում են, որ Գեմէրիկում սրի են անցկացրած 120 հայեր։

„Norddeutsche Zeitung“ կիսապաշտօնական օրգանը ասում է, որ պրօֆէսօր Թումայեանին հրամանագրված է դադարեցնել ամեն տեսակ ազիտատօրական գործունէութիւն յօգուտ հայկական շարժման. հակառակ դէպքում նա կարտաքսվի Պրուսիայից։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԴՕԿՈՒՄԵՆՏ

—

Ահա պատճէնը այն միացեալ հաղորդագրութեան, որ Ռուսաստանի, Աւստրիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի և Անգլիայի ներկայացուցիչները Կ. Պոլսում ուղղեցին Բ. Դրան օգոստոսի 26-ին և 27-ին (նոր ոճարով) Կ. Պոլսում տեղի ունեցած դէպքերի առիթով։

«Մեծ պետութիւնների ներկայացուցիչները իրանց պարտքն են համարում դարձնել Բ. Դրան ուշադրութիւնը վերջին արիւնահեղ կոտորածների միջոցին ակնյայտնի դարձած մի անսովոր լուրջ հանգամանքի վրա։ Այդ այն է, որ հայերին կոտորող և նրանց տները ու խանութները կողոպտող վայրենի հրոսակները պատահական խմբեր և ֆանատիկոս ժողովրդի յանկարծական գումարումներ չէին, այլ յատուկ կազմակերպութեան արդիւնք էին, որոնց մասին գիտէին և որոնց գուցէ ղեկավարում էին կառավարութեան գործակալները։

1) «Հրոսակախմբերը միաժամանակ երևացին մայրաքաղաքի զանազան կէտերում՝ հէնց որ յայտնի եղաւ հայ յեղափոխականների ձեռքով բանկ գրաւելու լուրը, նախ քան ինքը ոստիկանութիւնը կամ մի որ և է զինված ոյժ երևացնելը։

2) «Այդ հրոսակախմբերը կազմող ժողովրդի մեծ մասը հագնված էր և զինված մի և նոյն եղանակով։

3) «Նրանց առաջնորդում էին և ուղեկցում սօֆթաներ, զինուորներ կամ նոյն իսկ ոստիկանական պաշտօնեաներ, որոնք ոչ միայն հանդիսատես էին լինում խմբերի գործերին, բայց երբեմն նոյն իսկ մասնակից էին լինում նրանց։

4) «Գաղտնի ոստիկանութեան մի քանի գլխաւորներ նկատվել են բաշիբուզուկներին մահակներ և դանակներ բաժանելիս և նրանց շարժման ուղղութիւններ տալիս։

5) «Այդ մարդիկ ընդունակ եղան իրանց յանցաւոր գործունէութիւնը կատարել ազատ և անպատիժ կերպով նոյն իսկ զինուորների և օֆիցերների ներկայութեամբ և նոյն իսկ կայսերական պալատի առաջ։

6) «Դեսպանատներից մէկի (ռուսաց) թարգմանի ձեռքով կալանաւորված մարդասպաններից մէկը յայտնեց, որ զօրքերը նրան չեն համարձակի ձերբակալել և երբ նրան տարան Իլդիզի պալատը, այնտեղ նա ընդունվեց իբրև ծառայողների ծանօթ անձն։

7) «Եւրոպացիների մօտ ծառայող երկու թիւրքեր երկու օր, կոտորածի միջոցին, անհետացան և երբ վերադարձան՝ յայտնեցին, որ նրանց տուել էին մահակներ և դանակներ և պատուիրել էին սպանել հայերին։

«Այս փաստերը մեկնութիւնների կարօտ չեն։ Նրանք լուսաբանում են Անատօլիայում տեղի ունեցած արդիւնքը։

Բանասիրական

ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՐԵՒՄՈՒՏՔԻՑ

I

Շատ փոփոխութիւններ են կրել թէ երկիրը և թէ նրա զաւակը՝ մարդկութիւնը, փոխադարձ ազդելով իրար վրա, մինչև որ հասել են մեր օրերին։ Բայց մարդկութիւնը ամեն տեղ նոյն ճանապարհով և նոյն արագութեամբ չէ զարգացել. մի տեղ նա կանգ է առել հազար տարիներով, միւս տեղ նա հսկայական քայլեր է արել դէպի առաջ, և մի այլ դէպքում ծաղկած դրութիւնից յետ է դնացել, կամ պրօգրէսի փոխարէն բէգրէսի է ենթարկվել։ Էսկիմօսը, կամ հօտենտօտը այժմ էլ դեռ կանգնած է զարգացման այն աստիճանի վրա, ուր նրանք գտնվում էին դեռ քարեայ շրջանում, մի քանի տասնեակ հազարաւոր տարիներ առաջ. Ֆիդիասի, Պէրիկլէսի և Արիստոտէլէսի ժողովուրդն ընկաւ յետոյ այնպիսի ստրկութեան մէջ, որ մարդկութեան նախատինք՝ տաճկական բռնութեան ստրուկ դարձաւ, երբ գերմանական արիւնով թարմացած ազգերը մի քանի դարերի ժամանակամիջոցում Բաֆայէլների, Ճէքսպիրների, Նիւթոնների, Դարվինների, Էդիսոնների և Գլադստոնների ծնող հանդիսացան։

Եւրոպայի բաղդաւոր աշխարհագրական դիրքի և բարեխառն կլիմայի նշանակութիւնը՝ նրա սպիտակամորթ բնակիչների զարգացման նկատմամբ՝ գիտնականօրէն պարզված խնդիր է. բայց բնութեան ազդեցութիւնը երկար չը տևեց։ Հէնց սկզբից, իր գոյութիւնը պահպանելու համար, արևմուտքի զաւակը պէտք է կանգնաւոր և եռանդուն գործունէութիւն ցոյց տար. միջնադարը նպաստաւոր էր այդպիսի վարժութիւնների։ Շուտով նա զգաց իր մէջ ոյժ՝ դուրս գալու բնութեան խնամակալութիւնից։ Զուգենալով մնալ մշտական խաւարի ու թշուառութեան մէջ, նա, առասպելական տիտանների նման, խիզախեց կռիւ մղել նախանձոտ աստուածների դէմ, որոնք կեանքի ամեն բարիք և բնութեան գաղտնի ոյժերն իրանց էին վերապահել։

Անցան դարեր։ Այդ մաքառման վախճանը այժմ հասել է։ Յաղթութիւնը մարդու կողմն է։ Ծովի ահեղ ալիքները խոնարհվեցին նրա առաջ. հսկայ լեռները ճեղքվեցին, ճանապարհ տալով նրա հրաշունչ կառքերին. ցամաքը փոխեց իր երեսը նրա քմահաճութեամբ։ Նա թեւեր առաւ թռչելու հեռու, հեռու երկրի մակերեսյթից՝ վեր սլանալու մարմնով և ոչ միայն երևակայութեամբ։ Աստղազարդ երկինքը բացեց նրա առաջ իր գաղտնիքները, ովկիանոսն իր մութ խորքերում թաղված հրաշալիքները, մանրադիտակը՝ աշխարհը՝ իր անհերեսյթ թագաւորութիւնը. և պառաւ երկիրը, ընդհատելով միլիոնաւոր դարերի լռութիւնը, սկսեց պատմել իր սրամիտ զաւակին աշխարհի ստեղծագործութիւնը...

Բնութիւնը նուաճված է Արևմուտքի տիտանների չնորհիւ, և մարդը դառել է տէր երկրի, մեկնիչ տիեզերքի։ Արևմուտքի զաւակն էլ, ինչպէս ամեն մի կենդանի արարած, ունենալով ձգտում դէպի իր նմանը, նախ կազմեց խառն համախմբութիւն, ապա՝ ընտանիք, ցեղ և հասարակութիւն, բայց այդ հասարակական զարգացման մէջ էլ նա շատ հեռու թողեց մարդկութեան միւս մասերը։ Եւ հասկանալի է. այն ոգին, որը համարձակվեց խլել Արամազդի ձեռքից նրա անարկու շանթերը՝ չէր կարող երկար տանել մարդկային թուլութեան վրա հիմնված ուժեղի անարդարութիւնը, որ կոչվում է բռնութիւն։ Նրա ըմբոստ ոգին երկար մաքառեց. այդ կռիւը կռեց ու կոփեց նրա անվեհերութիւնը և ազատասէր ոգին, որը հռչակելով անհատի ազատութիւն, մի և նոյն ժամանակ դրեց՝ «մէկը բոլորի համար և բոլորը մէկի համար» նշանաբանը։

Թէև մեր դարի չէմքին յայտարարած «ազատութիւն, հաւասարութիւն և եղբայրութիւն» խօսքերը այսօր կարելի է տեսնել գրված միայն Ֆրանսիայի ամեն մի հասարակական շինութեան ճակատին, նոյն իսկ բանտերի պատերի վրա, բայց իրականութեան մէջ Արևմուտքում ամեն տեղ նրանք գործադրվում են համարեա մի և նոյն չափերով։ Ճիշդ է, շատ դէպքերում այդ բարիքները, որոնք ծածկված են այդ սուրբ խօսքերի տակ, լիովին գոյութիւն ունեն միայն բաղդաւորի չատկի մէջ ծնվածների համար։ Ճիշդ է, ազատ Եւրոպայի գլխին նստած են զանազան Մեսերնիխներ, Բիսմարկներ՝ իրանց աշակերտներով, որոնք երկաթէ մուրճով կառավարում են եւրոպական ազգերը այնպէս, ինչպէս հնդիկն իր փղին։ Ճիշդ է, աշխատանքի և կապիտալի յարաբերութիւնները հեռու են արդարութեան սահմանից։ Բայց դարձեալ, այդ պակասութիւններով հանդերձ, Արևմուտքը մնում է և լինելու է մարդկութեան առաջադիմութեան աղանդաւոր ուսուցիչ, թէ մտաւոր և գեղարուեստական աշխարհում, թէ հասարակական բարդ խնդիրներում։

Թող Արևելքի անշարժութեան, սարկահոգութեան և միստիկական խաւարի երկրպագուները ինքնահաւան ժպիտով չը մխիթարվեն, տեսնելով Արևմուտքի բծերը, որովհետև իրանց պաշտածը, ուղղի նման, մի ուղիղ տեղ անգամ չունի իր մարմնի վրա։ Թող Արևելքը լաւ չաշակերտի Արևմուտքին, եթէ ուզում է մրցել նրա հետ։ Արևելցու համար ամեն մի խաչնդոտ, կամ կեանքի չարիք՝ իրերի նախասահմանած անհրաժեշտութիւն է՝ Սլլահի կամք։ Անզգայ հպատակութիւն, կամ միստիկական յուռեսեսութիւն՝ ահա նրա վերաբերմունքը դէպի կեանքի երևոյթները։ Իսկ Արևմուտքի զաւակը, ամեն մի երևոյթի պատճառը տեսնելով արմատացած հէնց այս երկրի վրա՝ զուարթ, պայծառ մտքով, վստահ քայլերով, իսկոյն իր բոլոր ջանքերը ուղղում է չարիքի դէմ և դէնքը վայր չէ դնում ձեռքից, մինչև որ արմատախիլ չէ անում նրան։ Ճիշդ է, աւելի շատ նա այդ անում է, երբ բանը իր անձին կամ մերձաւորին է վերաբերում. ճիշդ է, նրա ալտրուիստական զգացմունքը դեռ չէ հասել համամարդկային լայն հորիզոնին, նոյն իսկ ամենաառաջադէմ համարված ներկայացուցիչների մէջ, ինչպէս այդ ցոյց տուեց սոցիալ-դեմոկրատների պարագլուխների սառնարիւն վերաբերմունքը դէպի Թիւրքաց գազանութիւնների զոհերը։ Բայց ինչպէս կը տեսնենք, մի ոյժ ունի Արևմուտքը, որն ընդունակ է դուրս բերել նրան եսականութեան նեղ շրջանից։ Սակայն ինչ կարող է ասել իրան արդարացնելու համար մարակի թագաւորութիւնը, ինչ կարող են ասել ժամանակակից վանդալները՝ ընդհատելով բարբարոս ազգակները։

Այո, մարդկութեան էվօլիւցիան դեռ չէ դուրս

ունեցած անցքերը և շատ վտանգաւոր մի երևոյթ են ներկայացնում: Այսօր նրանք ուղղված են մի ազգութեան դէմ. վաղը նրանք կարող են գործադրվել օտար կօլօնիաների դէմ կամ նոյն իսկ այն տարրի դէմ, որ այժմ նրանց հաւանութիւն է տալիս:

«Մեծ պետութիւնների ներկայացուցիչները իրաւացի չէին վարված լինի, եթէ թագցնէին այս բոլորը իրանց կառավարութիւններից և պարտք են համարում յայտնել Բ. Դրան, որ նա պէտք է երևան հանի յիշեալ կազմակերպութիւնը և նրա ղեկավարներին ու գործակալներին խիստ պատժի:

«Իրանը, պետութիւնների ներկայացուցիչները, խոստանում են իրանց կողմից նպաստել քննութեան գործին՝ առաջ բերելով բոլոր յայտնի փաստերը ականատեսների միջոցով:»

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

—

Օգոստոսի 28-ին

Ինչպէս յայտուկ է բոլոր ասիական քաղաքներին, Շուշին էլ, ամենից առաջ, աչքի է ընկնում իր կեղտոտ և անկանոն փողոցներով: Եւ, որ գլխաւորն է, քաղաքի կեղտը չեն նշմարում իրանք քաղաքացիները: Անցնում ես այստեղի խառնիխուռն փողոցներով և ամեն տեղ քո աչքին ներկայանում է կուտակված աղբ, որ տներից է դուրս թափած: Անծանօթ անցաւորի շընչառութիւնը կարվում է չորս կողմ տիրող գարշահոտութիւնից: Դրա վրա աւելանում են նաև սատկած հաւերի, կատուների, շների հոտած դիակների արձակած անտանելի գազերը: Ի հարկէ, ամառ ժամանակ, առատ բուսականութիւնը մեծ դոր է տեսնում այստեղ, մաքրում է օդը, կլանում է վնասակար գազերը: Իսկ մարդկանց համար կարծես ամենևին չը կայ մաքրութիւն ասված հասկացողութիւնը, և մաքուր հագնված շուշեցին ամենևին չէ խորշում աղբանոցի նման փողոցներից: Առհասարակ, այստեղ նկատվում է սաստիկ մեծ անտարբերութիւն դէպի ուրիշները, դէպի քաղաքը, հասարակութիւնը. ամեն մարդ մտածում, հոգս է անում լոկ իր մասին, իր տան, իր խանութի, իր գործերի մասին, իսկ դրանից դէնը—թող աշխարհը քանդվի... Այս է պատճառը, որ քաղաքը մնացել է այդպէս անտէր անտիրական: Ամենից քաղաքում չը կայ մի հիւանդանոց, ուր աղքատ հիւանդները կարողանան օգնութիւն ստանալ, չը կայ մի բաղանիք, ուր մարդ կարողանայ մաքրել իր մարմինը, չը կայ առողջապահական հսկողութիւն տների, փողոցների վրա, չը կայ առատ ջուր, որով կարելի լինի գոնէ տունը մաքրվել և լուացվել: Խմելու ջուրը այստեղ բերում են հեռու ձորերի աղբիւրներից, էշի բեռներով, և մի բեռը ծախում են 10 կոպէկով:

Երկու հասարակական տեղ կայ, ուր մարդիկ կարող են իրար տեսնել. բուլվարը. կամ «դուզերը», ինչպէս տեղացիներն են ասում, և գրադարան-ընթերցարանը: Այս վերջին հիմնարկութիւնը շուշեցիների միակ մխիթարութիւնն է, սակայն ընթերցարանի սենեակի փոքրութիւնը և անմաքրութիւնը աչքի են ընկնում: Բայց և այդպէս, ընթերցարան այցելողների և գիրք վերցնողների թիւը բաւական մեծ է: Երբեմն չեն խորշում ընթերցարան գալ նաև տեղիս «կրթված» տիկինները և օրիորդները:

Եր. Ղազ.

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ԲԱՅԱԶԷՏԻՑ

—

Սեպտեմբերի 8-ին

Այս ամսի 29-ին նշանակված են քաղաքային աւագի և ձայնաւորների ընտրութիւնները, նախագահութեամբ պ. Յարութիւն Մամիկոնեանցի: Մեր երիտասարդութեան համար գործելու մեծ ասպարէզ է բացվում. նա մինչև այժմ մատնված էր հասարակական մեռելութեան և չարաբնակ դժգոհ էր, որ հասարակութեան ծառայելու համար ոչ մի ասպարէզ չը կայ... Քաղաքային ինքնավարութիւնը, վաղուց սպասված այդ հիմնարկութիւնը, զուտ հայերից բաղկացած մի քաղաքի համար, ինչպիսին է Նոր-Բայազէտը, մեծ դեր կարող է խաղալ հասարակութեան առաջադիմութեան և նրա տնտեսական ու այլ կարիքների համար: Մեր երիտասարդները հէնց այժմեանից պիտի աշխատեն լուրջ մտածել այդ կարևոր խնդրի վրա. Նրանցից պիտի բացակայեն անձնական հաշիւները ու թշնամութիւնները, կիրքը ու նախանձը պիտի չքանայ:

Երևանի նահանգի գաւառական քաղաքների մէջ առաջադիմութիւնից հեռու, մտաւոր ու բարոյական պաշարից զուրկ Նոր-Բայազէտ քաղաքը, որ կրիայի քայլերով էր ընթանում, այժմ յայտնի կերպով առաջ կը գնայ: Թէ ընդհանրապէս ինչ կարիքներ, ինչ պակասութիւններ ունի այդ քաղաքը, դա լաւ կը հասկանան ընտրված աւագը ու ձայնաւորները: Շատերն են այդ պաշտօնի համար երազում, շատերն են ցանկանում իրանց ոտքը կոխել այդ հիմնարկութեան շէմքը, այդ պաշտօնը շատերին է գրաւում... Նա, որը իր կեղտոտ զգացմունքներով յայտնի է մեր քաղաքին, այժմ ոտքի է կանգնել. նա, որը զուրկ է սկզբունքից ու իր եռը ու անձը միշտ գերադասել է ժողովրդի շահերից—այդպիսիներին էլ նոյնպէս չլացնում է այդ պաշտօնը...

Վ. Ց.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Ինչպէս յայտնի է, մի քանի ժամանակ առաջ հեռագիրները յայտնեցին, որ սուլթանը կամենում է աքսորել Իզմիրլեան պատրիարքին Երուսաղէմ. սակայն Բ. Դուռը հերքեց այդ լուրը: Այդ մասին Պոլսից մեզ գրում են, որ, ճշմարիտ, Իզմիրլեան աքսորվել էր, բայց յետոյ վերադարձվել է անգլիական դեսպանի միջնորդութեամբ:

—

Սեպտեմբերի 14-ին, շաբաթ օր, երեկոյեան, իր արձակուրդից Թիֆլիս վերադարձաւ կովկասեան կառավարչապետի պաշտօնակատար կոմս Տատիշչէվ:

—

Սեպտեմբերի 13-ին Թիֆլիս հասան օտար դատաւորների հոգևոր գործերի դիրեկտոր Մասալով և նրան ուղեկցող իշխան Ուխտոմսկի, և շաբաթ օր, սեպտեմբերի 14-ին, այցելեցին Ներսիսեան հայոց հոգևոր դպրոցը, ինչպէս և այժմ փակված Յովնանեան դպրոցը: Ներսիսեան դպրոցում նրանք մնացին մօտ մի ժամ, այցելեցին դասարանները և ներկայ էին ռուսաց լեզուի դասին: Կիրակի օր, սեպտեմբերի 15-ին երեկոյեան գնացքով Մասալով և Ուխտոմսկի մեկնեցին դէպի Էջմիածին, որտեղ նրանք գընում են, ինչպէս յայտնի է, Բարձրագոյն յանձնարարութեամբ:

—

«Արարատ» ամսագիրը, բերելով «Պատրիք գայմգամ» Բարթուղիմէոսի առաջին սարկական ճառը, ասում է. «Այս կեանքում այսպէս առատ վարձատրվելով՝ յոյս ունենք, որ յիշեալ անձինք անշուշտ միւս կեանքումն ևս իրանց արժանի վարձը կը ստանան»: Էջմիածինը միշտ իր ատորադրեալների մահացու մեղքերը յանձնել է միւս աշխարհին, և այդ պատճառով ատորադրեալներից ոչ ոք չէ ճանաչում նրան, և կատարում է այն, ինչ որ յանցաւոր լոգիկան է թելադրում:

—

Կանանց միջազգային կօնգրէսում, որ գումարված է Բերլինում, ինչպէս հեռագրում է Ռուսաց գործակալութիւնը մայրաքաղաքի լրագիրներին, օրիորդ Մելիք-Բէգլարեան նկարագրեց կանանց մտաւոր շարժումը Հայաստանում:

—

Թիֆլիսի հայոց Հրատարակչական ընկերութիւնը լոյս ընծայեց երրորդ տպագրութեամբ երգիծաբան Պարոնեանի յայտնի «Ազգային Ջոջեր» գիրքը: Ներկայ տպագրութեան մէջ մտել է Դ. Արծրունու կենսագրութիւնը և զետեղված է հեղինակի պատկերը:

—

Կաթնատնտեսական ցուցահանդէսի համար Թիֆլիսի քաղաքային ուղղաման յատկացրել է Ալէքսանդրեան այգու այն մասը, որ կցած է Գիւղատնտեսական ընկերութեան շինութեանը. ցուցահանդէսին մասնակցելու ցանկացողների թիւը օրից օր աւելանում է: Բօրչալուի գաւառի նշանաւոր պանիրագործարանները մտադիր են ուղարկել իրանց պանիրները: Ցանկութիւն է յայտնել մասնակցելու կեֆիր և կումիս պատրաստող տիկին Կորօնա:

—

Ռուս դրամատիկական արտիստների խումբը ամսիս 15-ին, կիրակի, վրաց ազնուականների կալուածական բանկում սկսեց իր ներկայացումները դերասան Շումլինի ղեկավարութեամբ և Վ. Գունիայի վարչութեամբ: Սկզբնի բացման համար խումբը ներկայացրեց Գոգոլի յայտնի «Ռէվիզօր» պիէսան: Խմբի գլխաւոր դերակատարներն են—դերասաններ Սամօյլով-Միչուրին, Ֆաղէէվ, Իկով: Չենք կարող չը նկատել, որ այժմեան խումբը ևս կրկնում է իր նախորդի սխալը. նա նշանակել է տեղերի գները նոյնպէս բարձր, ինչպէս առաջ և մոռացել է այն պարզ իրողութիւնը, թէ թատրոնը ամենից առաջ պէտք է հանրամատչելի լինի. այլապէս նա դառնում է ոչ թէ մի անհրաժեշտութիւն, այլ միայն շռայլութեան առարկայ:

—

Լսում ենք, որ Թիֆլիսի քաղաքային վարչութեան անդամ իշխան Պ. Արգուտինսկի հրաժարական է տալիս իր պաշտօնից:

—

Ներսիսեան դպրոցի աշակերտների թիւը, որ անցեալ տարի աւելացել էր զգալի կերպով, այս տարվայ նոր ընդունված աշակերտների հետ հասաւ 590-ի:

—

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ Բաթումի շրջակայ ճահիճները չորացնելու համար նախահաշիվ որոշված է 350,000 ռուբլի: Անկասկած, ճահիճները չորացնելուց յետոյ Բաթումի աւանդական ջերմ ու տենդը զգալի կերպով կը պակասի:

—

Բժշկական դէպարտամէնտի հրատարակած վերջին հաշուից երևում է, որ քաղաքացիական բժշկութիւնը, ի հարկէ, երես առ երես չէին արտայայտում: Կամբիզը զգում էր իր հպատակների ատելութիւնը: Մի անգամ նա դիմեց իր աւագներից մէկին այս հարցով.

—Ասա ինձ ճշմարիտը. ինչ են խօսում իմ մասին պարսիկները:

—Մեծ թագաւոր, քո հպատակները քեզ շատ յարգում են քո խելքի և քաջութեան համար, բայց գտնում են, որ դու գինի աւելի ես խըմում, քան հարկաւոր է, պատասխանեց ստրուկ մեծաւորը:

Թագաւորը վերցրեց աղեղն ու նետը: Պալատի բակում խաղում էին մի քանի երեխաներ, որոնց թուում և ստրուկ—աւագի որդին: Թագաւորը նշան դրեց. նետը կպաւ երեխայի սրտին և մեռցրեց նրան:

—Ասա այժմ, մի՞թէ կարող է այսպէս նշան դնել մի մարդ, որը աւելի է խմում, քան հարկաւոր է,—քմծիծաղ երևսով դիմեց մեծ բռնակալը թշուառ հօր:

—Մեծ թագաւոր, իրանք ատուածները չէին կարող աւելի աջող խփել,—եղաւ պատասխանը: Այդպէս, ստրկամիտ ոգին մնացանում է բռնութիւնը. բռնութիւնը խեղդում է ճշմարտութիւնը. ուր խեղդված է ճշմարտութիւնը, այնտեղ չէ կարող լինել և քննադատութիւն. ուր չը կայ ազատ քննադատութիւն, չը կայ և հասարակական կարծիք, ուրեմն՝ և այն այժը, որը կարող է վերջ դնել անիրաւութեան: Ահա ինչու կարելի է ասել՝ լոյսը Արևմուտքից է. փրկութեան յոյսն էլ այնտեղ պէտք է որոնել:

L.

եկել գաղանային եսականութեան չրջանից, բայց, քաւ լիցի ասել, որ Արևելքը իր զարհուրելի անցեալով և թշուառ ներկայով հանդիսանալու է առաջնորդ այդ եգիպտական գերութիւնից դէպի մարդկութեան երջանկութեան աւետեաց երկիրը: Մենք կը հաւատանք, որ «չարիքին չընդդիմադրել» հրաւէրը կը լինի միայն զօրավիդ ամարդ բռնութեան և գարշելի անիրաւութեան, կամ մոլեռանդ բարբարոսութեան, բայց երբէք խաղաղութեան:

Ո՞րն է ուրեմն այն այժը, որը գրաւական է Արևմուտքի առաջադիմութեան և նրա օգնութեամբ՝ մարդկութեան վերածնութեան:

Եւրօպական ազատ կարգերը բաց են թողել ճշմարտութեան առաջ բոլոր ճանապարհները: Աստուածային ճշմարտութիւնը կարող է ամեն կերպ ազատ ճանապարհ որոնել դէպի մարդկանց համոզմունքը և խիղճը: Անսխալական ազատից սկսած մինչև սխալական վերջին մահկանացուն չեն համարձակվի ճշմարտութեան թափանցող ճառագայթների դէմ թանձր վարագոյր ծածկել: Եւ նա, թափանցելով ամեն տեղ, մտնում է և մարդկանց հոգու խորքերում թաղնված խիղճը և համոզմունքների հիմքերը: Տիրելով այդ երկուսին, նա կարողանում է ըստեղծել մի այժ, որը աւելի զօրեղ է, քան Կրուպպի թնդանօթները, աւելի հզօր, քան բոլոր բռնակալները միասին վերցրած: Դիպլօմատիայի սատանայական ցանցերը նա կը պատռի, ինչպէս առիւծը՝ սարդի ատայնը: Այդ այժը հասարակական կարծիքն է:

Նա Արևելքի համար օտար բոյս է. նա կը թառամի նրա խեղդիչ մթնոլորդում, որովհետև նրա արմատը՝ ճշմարտութիւնը՝ այդտեղ զուրկ է իր ամբողջութիւնից: Արևելքում ճշմարտութիւնը կամ պիտի Եղոպոսի լեզուով խօսի, կամ չղոքորթութիւններով քաղցրանալով ծնկաչոք պիտի սպասի բռնութեան բարեհաճ հայեացքին:

Թող եւրօպական դիպլօմատիան, օգտվելով մանաւոր սեփականութեան ազատ մրցման շնորհիւ առաջացած չահամոլ նախանձից՝ գաղանային եսականութեան կուռքի համար տաճարներ կանգնեցնի: Թող այդ Մոլոքի քրմերը որքան թոյլ, անպաշտպան մարդիկ և ազգեր տեսնեն՝ բռնոտեն և զոհեն իրանց անկուշտ աստուծուն: Բայց ճշմարտութիւնը վերջապէս կը համոզի բոլոր աշխատաւորներին, որոնք կոչվում են ամեն տեղ ժողովուրդ, որ այդ յուզական շահը իսկապէս սպանի ուղղած մի փամփուշտ է. Դիզրայէլիի ուրցրածը Սոլսբիւրիի ժամանակ տրաքվում է: Եթէ ճշմարտութեան աջողվի իրերի և երևոյթների մասին հասարակական կարծիքի մոլորեցնող մշուշը հեռացնել՝ այն ժամանակ արծաթասէր Յուդան անգամ, չուզենալով օգտվել անմեղ արիւնով սրսկած արծաթից՝ կը գնայ և կը խեղդվի... Մի քրմապետի գլխում կարող է ծնվել, օրինակ, մի վայրենի միտք—գայլի գործը դիւրացնելու համար գառնուկի ոտներն էլ կապել կամ նրա փոքրիկ կոտոշները հանել, որպէս զի ոչ փախչի, ոչ էլ փարթի իրան պաշտպանել. գուցէ մի այլ քուրմ ուրախութեամբ պատրաստ լինէր և ինքն մատնակից լինել այդ խաղաղասէր գործին, բայց ճշմարտութիւնն առաջուց այնպիսի նախապատրաստութիւն է լինում տեսած, որ յանկարծ լսվում է զայրացած երկնքի սրտի նման հասարակական կարծիքի մռնչոցը, և քուրմերը իսկոյն սարսափած ձեռները ետնում են իրանց քամակը:

Գալուխովսկի և Կրետէ, Սոլսբիւրի և Անգլիայի հասարակական կարծիք դերակատարների տպաւորութիւնը այնքան թարմ է, որ հազիւ թէ հարկ լինի երկարացնել...

Ահա այդ հասարակական կարծիքն է, որը բոլոր խնդիրներում այժմ Արևմուտքում կատարում է այն դերը, որը Ալէքսանդր Մակեդոնացու ձեռքում խաղում էր Գորդեան հանգոյց կարող թուրը: Ուրեմն, Արևմտքում անիրաւութիւնը կարող է չարունակ գործել մինչև որ մոլորված կամ թմրած է հասարակական կարծիքը. բայց վայ չարագործներին, երբ ազատ խօսքը՝ մերկացնելով նրանց՝ կը կապի անարդ սիւնից: Մրրիկը չունի այն այժը և անեղ փոթորիկը՝ այն կատաղութիւնը, որ յատուկ է կայենական ոճիրներից սարսափահար զարթած հասարակական կարծիքին: Այո, միայն արդարութեան զինուորները պէտք է իմանան զարթեցնել քնած առիւծին:

Իսկ ինչ կարող է անել Արևելքում լեզուն կտրած ճշմարտութիւնը: Ի՞նչ կարող է անել ճշմարտութիւնը այնտեղ, ուր կամայականութիւնը խնկարկվում է, բռնութեան լուծը քաղցր է թուում և մարդկանց մէջ բթացել է արդար զայրոյթի ընդունակութիւնը: Բռնութիւնը այդտեղ «նուիրապետութիւն» է համարվում, ինչպէս ասում են մեզ մօտ խաւարի զաւակները:

Մի զրոյց, չը նայած իր հնութեան (Արևելքում ժամանակը կանգնած է), այնքան ընորոշ է Արևելքի համար, որ ես թոյլ կը տամ ինձ այստեղ դնել:

Պարսիկներն ունէին Կամբիզ անունով մի թագաւոր, որին ատում էին, ինչպէս մի անգութ, դաժան և արբեցող մարդու, բայց այդ ատելութիւնը, ի հարկէ, երես առ երես չէին արտայայտում: Կամբիզը զգում էր իր հպատակների ատելութիւնը: Մի անգամ նա դիմեց իր աւագներից մէկին այս հարցով.

—Ասա ինձ ճշմարիտը. ինչ են խօսում իմ մասին պարսիկները:

—Մեծ թագաւոր, քո հպատակները քեզ շատ յարգում են քո խելքի և քաջութեան համար, բայց գտնում են, որ դու գինի աւելի ես խըմում, քան հարկաւոր է, պատասխանեց ստրուկ մեծաւորը:

Թագաւորը վերցրեց աղեղն ու նետը: Պալատի բակում խաղում էին մի քանի երեխաներ, որոնց թուում և ստրուկ—աւագի որդին: Թագաւորը նշան դրեց. նետը կպաւ երեխայի սրտին և մեռցրեց նրան:

—Ասա այժմ, մի՞թէ կարող է այսպէս նշան դնել մի մարդ, որը աւելի է խմում, քան հարկաւոր է,—քմծիծաղ երևսով դիմեց մեծ բռնակալը թշուառ հօր:

—Մեծ թագաւոր, իրանք աստուածները չէին կարող աւելի աջող խփել,—եղաւ պատասխանը: Այդպէս, ստրկամիտ ոգին մնացանում է բռնութիւնը. բռնութիւնը խեղդում է ճշմարտութիւնը. ուր խեղդված է ճշմարտութիւնը՝ այնտեղ չէ կարող լինել և քննադատութիւն. ուր չը կայ ազատ քննադատութիւն, չը կայ և հասարակական կարծիք, ուրեմն՝ և այն այժը, որը կարող է վերջ դնել անիրաւութեան: Ահա ինչու կարելի է ասել՝ լոյսը Արևմուտքից է. փրկութեան յոյսն էլ այնտեղ պէտք է որոնել:

L.

ների թիւը ամբողջ կայսրութեան մէջ 12,174 է։ Դրանցից 11,571 գտնվում են եւրոպական Ռուսաստանում, 357—Կովկասում, 224—Սիբիրում և 78—Միջին Ասիայում։

—

ԴԻԼԻՋԱՆԻՑ մեզ հաղորդում են. «Սեպտեմբերի 8-ին այստեղ մի արիւնահեղ դէպք պատահեց։ Տեղական քրդերից մէկը իր որդուն թլփատում էր և այդ պատճառով մի տան առաջ հաւաքվել էին Դիլիջանում ապրող բոլոր քրդերը և քրդուհիները և «զուրնա դհոլով» ամբողջ օրը «եալլի» կոչված պարը բռնած, հանգիստ պարում էին։ Յանկարծ հաւաքված հանդիսականներից մի պարսիկ, մօտենալով քրդերից մէկին՝ սկսեց խօսել նրա հետ ու անմիջապէս հանելով բէվոլվերը, բոլորի ներկայութեամբ կրակ տուեց. երկրորդ հարուածով քիւրդը գլորվեց գետին և հոգին տանդեց։ Քրդերը այդ տեսնելով, իսկոյն վրա հասան պարսկին բռնելու։ Բռնելու ժամանակ նա կրկին անգամ բէվոլվերը արձակեց իրան բռնող քրդի վրա, նրան էլ երկրորդ հարուածով գետին գլորեց, ու սկսեց փախչել. քրդերը անմիջապէս ընկան ետեւից բռնելու։ Հազիւ հազ բռնել էին, որ սպանողի եղբայրը վրա հասնելով, եղբօրը օգնելու նպատակով, հանում է դանակը ու վիրաւորում քրդերից մէկին։ Այդ միջոցին երկու հայ երիտասարդներ վրա հասնելով, մի քանի անգամ խփեցին պարսիկի գլխին և գետին գլորեցին, մինչև որ եկաւ ոստիկանութիւնը և կալանաւորեց նրան»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Արեւելեան հարցով զբաղվող բոլոր անգլիական լրագիրների շարքում իր չափաւորութեամբ աչքի է ընկնում «Times» լրագիրը։ Նրա կարծիքով, «սպառազինված միջամտութիւնը թիւրքաց գործերում անպատճառ առաջ կը բերի կոտորածներ մեծ տարածութեան վրա։ Բացի դրանից, եթէ Անգլիան դիմի այդ միջամտութեան՝ առանց օտար պետութիւնների համաձայնութեան, նրա այդ քայլը պատճառ կը դառնայ եւրոպական պատերազմի»։ Ցեռոյ «Times»-ը, խօսելով Անգլիայի այդ արշաւանքում ունենալի հակառակորդների ու դաշնակիցների մասին, ասում է. «Ռուսաստանի գործողութեան եղանակը շատ ճիշդ կերպով որոշված է հանգուցեալ իշխան Լոբանովի կողմից անցեալ տարի. Ֆրանսիան հետեւում էր մի և նոյն քաղաքականութեան. Աւստրիան և Գերմանիան, լուրերին նայելով, համաձայնութեան են եկել Վիէննայի տեսակցութեան ժամանակ և Աւստրիայի ազնուական քաղաքականութիւնը ոչ մի կասկած չէ թողնում այդ համաձայնութեան բնաւորութեան մասին։ Եւ միթէ հայկական ագիտացիայի պաշտպանները այդպիսի պարագաների մէջ կարող են հետամուտ լինել եւրոպական պատերազմի»։

—

Թիւրքաց կառավարութիւնը հրատարակել է հետեւեալ պաշտօնական հեռագիրը, որ նա ուղղել է իր արտասահմանեան ներկայացուցիչներին Կ. Պոլսի կոտորածի առիթով. «Հայ յեղափոխականների ձեռքով Կ. Պոլսում կատարված վերջին անկարգութիւնների ժամանակ, վիրաւորվել են 236 հոգի թիւրք օֆիցէրներ, զինուորներ ու խաղաղ մուսուլմաններ, որոնք մասնակցում էին կարգը վերականգնելու գործին. սպանվածների թիւը նոյնպէս հասնում է այդ թիւին։ Քաղաքի զանազան հիւանդանոցների մէջ գտնվող վիրաւորվածների թշուառ վիճակին տեղեակ են և Կ. Պոլսի եւրոպական դեսպանների մի քանի անդամները։ Հայ յեղափոխականների մօտ գտել են 118 ռումբեր, դինամիտային փամփուշտներ և ուրիշ պայթող հրանիւթեր»։

—

«Frankfurt. Zeitung» լրագրին հեռագրում են Կ. Պոլսից, սեպտեմբերի 3-ից. «Անցած երեքշաբթի Կ. Պոլսի բնակիչները նորից սաստիկ վախի ենթարկվեցին։ Մի կողմից լուր տարածվեց, թէ ծովապետ Սէյմուր, որ իր նաւատօրմով կանգնած է Դարդանէլի մուտքում, ստանում է անգլիական դեսպանից ամեն վեց ժամը մի անգամ հեռագիր՝ իրերի դրութեան մասին։ Իր ստացած հրահանգի համաձայն, լորդ Սէյմուր, եթէ որոշված ժամանակին չը ստանայ այդպիսի հեռագիր, պէտք է համարի այդ հանգամանքը իբրև նշան, թէ գործերը վատնզաւոր ընթացք են ստանում, և այլ ևս չը սպասելով նոր կարգադրութիւնների, պէտք է ուժով անցնի նեղուցը և ուղղակի Կ. Պոլսի վրա գնայ։ Միւս կողմից շարունակ երկիւղ են կրում, որ նոր կոտորածներ կը լինեն։»

—

«Correspondence Internationale» լրագիրը հաղորդում է դիպլոմատիական աղբիւրից հետեւեալ փաստը. «Այս օրերս կայացած դեսպանական խորհրդակցութեան ժամանակ սրը Ֆիլիպ Կէրրի յայտնեց, թէ իր պետութիւնը այն կարծիքն ունի, որ չէ կարելի բաժանել հայոց հարցը ընդհանրապէս Թիւրքիայում բէֆորմներ մտցնելու հարցից։ Ամենից առաջ պէտք է ի նկատի ունենալ Մակեդոնիայի վիճակը. որքան շուտ այդ անվի, այնքան աւելի լաւ կը լինի, որովհետեւ այնտեղի շարժումը կարող է ընդհանուր հրդեհի պատճառ դառնալ։ Լոնդոնի կաբինէտը ենթադրում է, որ Մակեդոնիային էլ պէտք է տալ այնպիսի ինքնավարութիւն, որ ազատվեն այդ երկրի զանազան ազգութիւնների շահերը։ Այդ նպատակով բրիտանական կառավարութիւնը հաճութեամբ տալիս է իր համաձայնութիւնը եւրոպական կոնֆէրէնցիա գումարելու առաջարկի մասին, թիւրքական բէֆորմների հարցի լուծման համար։ Սրը Ֆիլիպ Կէրրիի այդ յայտարարութեան՝ միւս դեսպանները պատասխանեցին, թէ առ այժմ իրանց կառավարութիւնները նրպատակայարմար չեն համարում և անհրաժեշտ չեն տեսնում կոնֆէրէնցիայի գումարումը։»

—

Լրագիրների տեղեկութեան համեմատ, նորերս Իզիզ-Ռիսկի բերդապահ զօրքի փոխվելը բացատրվում է նրանով, որ այդ բերդապահ զօրքի մի քանի օֆիցէրներ մասնակցում էին այն դաւադրութեան, որի նպատակն էր գահընկէց անել փադիշահին, և յարաբերութիւններ ունէին անգլիական ագէնտների հետ։

—

Թայխանեան զինարանից արձակվեցին այնտեղ ծառայող բոլոր օտարահպատակ օֆիցէրները և ինժէնէրները, որոնց թւում շատերը վաղուց արդէն գտնվում էին թիւրքաց ծառայութեան մէջ։ Արձակված պաշտօնեաների մեծ մասը անգլիացիներ են։

—

Կ. Պոլսում սարսափը սարսափին է հետեւում։ Սեպտեմբերի 3-ին (15-ին), Պէրայի Ծովափի վրա, գիշերապահ զինուորի յանկարծ արձակած հրացանի պատճառով, սարսափելի խառնակութիւն ընկաւ, որի ժամանակ յիսուն մարդուց աւելի ընկան Ոսկեղջիւրը և խեղդվեցին։ Մի փոքր յետոյ, Պէրայում և Ղալաթայում ամենքը սկսեցին փախչել։ Այս անգամ սարսափը առաջացաւ նրանից, որ ձերբակալեցին յեղափոխական կոմիտեի անդամներից մէկին, որը մտել էր մի հայի խանութ և խանութատէրից խոշոր գումար էր պահանջում կոմիտեի կարիքների համար։

—

Բացի Բումինիայից, Թիւրքիայից գաղթող հայերին արգելված է այժմ մտնել նոյնպէս Բոլգարիա և Յունաստան։

—

Կ. Պոլսում մի իրադէ հրատարակվեց, որով արգելվում է հայերին թաղել մայրաքաղաքը։ Այդպիսի իրադէներ, սակայն, արդէն մի քանի անգամ են հրատարակվել, բայց նրանք իւրաքանչիւր անգամ ջնջվել են։

—

«Правит. Вѣстникъ»-ում կարդում ենք. «Հայկական շարժման մասին Վիէննայի «Politische Correspondenz» լրագրին գրում են, որ Գերմանիայում, Ֆրանսիայում և Աւստրո-Ունգարիայում միաբերան պախարակում են հայ յեղափոխական ագիտացիայի ղեկավարների վարմունքը, որը պատճառ եղաւ հայերի կոտորածին. մի և նոյն ժամանակ չեն արդարացնում և թիւրք կառավարութեան ընթացքը, որը թոյլ տուեց մահմետական ամբոխին կատաղութեան հասնել և կոտորել հայերին երեք օր շարունակ։ «Polit. Corresp.» ի տեղեկութիւնների համաձայն, թիւրքաց ոստիկանութեան մինիստրը յայտնել է, որ սպանութիւնների և կողոպուտների համար բանտարկված մահմեդականների թիւը հասնում է 200-ի. «Տարօրինակ տպաւորութիւն է թողնում, նկատում է լրագիրը, այդ թւի անհամեմատութիւնը համեմատելով այն հաղարաւոր մահմետականների հետ, որոնք մասնակցել էին երեքօրեայ կոտորածին»։ «Times» լրագրին հեռագրում են, որ Բոսֆորից հեռացող իւրաքանչիւր նաւ տանում է իր հետ բազմաթիւ հայեր։ Նրանք փախչում են թիւրքաց մայրաքաղաքից, վախենալով յեղափոխական շարժման պարագլուխների նոր ցոյցերից, որոնց հետեւանքները կրկին կը ծանրանան խաղաղ հայ ազգաբնակութեան վրա»։

—

Վիէննական հաստատ աղբիւրներից հաղորդում են, որ մեծ պետութիւնների այժմեան դիպլոմատիական գործողութիւնը ի նկատի ունի միասին զրաւել Թիւրքիան, բայց առանց բաժան բաժան անելու նրան և սուլթանին գահընկէց անելու։ Դրանից առաջ, սակայն, պետութիւնները դիտաւորութիւն ունեն հաւաքական ծովային ցոյց անել թիւրքաց ջրերում։

—

Կ. Պոլսից հաղորդում են, որ աւստրո-ունգարական դեսպան բարոն Կալիչէ պահանջեց աւստրիական էսկադրա ուղարկել թիւրքաց ջրերը։

—

Լոնդոնից մայրաքաղաքի լրագիրներին հեռագրում են. «Հոկտեմբերի 19-ին այստեղ հայոց հարցի վերաբերութեամբ մէկ անագին միտինգ տեղի կունենայ, Տալբոտ եպիսկոպոսի նախագահութեամբ։ Հռետորների թւում հանդէս կը գան՝ հոչակաւոր արտիստ Իրվինգ, Նկարիչ Բէրն և ուրիշները։ Միտինգի ծրագիրը խիստ կերպով արգելում է յարձակումներ մահմետականութեան վրա։»

—

Կ. Պոլսից հեռագրում են «Новости» լրագրին սեպտեմբերի 9 ից. «Այստեղ գտնված ռումբերը բոլորը անգլիական ծագում ունեն. կալանաւորված են 75 հայեր։»

—

Պլաղատոն,—«Новости» լրագրի խօսքով,—անգլիական մէկ լրագրի հրատարակչին գրած նամակի մէջ յոյս է յայտնում, որ Ռուսաստանը կը խղճայ հայերին և որ նա կը հետեւի իշխան Լոբանովի չափաւոր քաղաքականութեանը։

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(Մայրաքաղաքների լրագրերում տպված)

—

Հաագա, 10 սեպտեմբերի։ Երբ երկրորդ պալատում քննվում էր խնամակալուհի-թագուհու գահական ճառի պատասխան-ուղերձը, Կերկվիկ հարցապնդում արեց կառավարութեան Թիւրքիայի վիճակի մասին և ցոյց տուեց, թէ անկարելի է խօսել բարեկամական յարաբերութիւնների մասին մի այնպիսի պետութեան հետ, որը թոյլ է տալիս քրիստոնեաների ջարդը։ Թիւրքիան պէտք է արտաքսվի Եւրոպայից։ Արտաքին գործերի մինիստր Բէլլ վճռական կերպով ընդդիմացաւ բարեկամ պետութեան վրա եղած յարձակումներին և յայտնեց, թէ դրութիւնը Թիւրքիայում դեռ բաւականաչափ չէ պարզված և թէ Նիդէրլանդիայի վիճակը Եւրոպայում նրան իրաւունք չէ տալիս մասնակցել մեծ պետութիւնների կողմից Թիւրքիայի վերաբերմամբ ձեռք առնելի միջոցներին։ Նիդէրլանդիայի չահերը բոլորովին ապահովված են։ Վանբէլանդ համակրութիւն յայտնեց հալածված հայերին։

Կ. Պոլիս, 11 սեպտեմբերի։ Պաշտօնապէս հերքվում է անգլիական լրագիրներում տպված այն լուրը, որ իբր թէ հայերը, կամ նոյն իսկ բոլոր քրիստոնեաները սպասում են, որ մօտ ժամանակներում մուսուլմանները կը յարձակվեն իրանց վրա։ Այստեղ այդ համարում են չար նպատակով տարածված լուր։ Նոյնպէս անհիմն են անգլիական լրագիրների հաղորդած այն լուրերը, թէ մայրաքաղաքից հայրենիք ուղարկվող հայերին խմբովին սպանում են և թէ ոստիկանութիւնը կալանաւորված հայերի հետ վատ է վարվում։

Լոնդոն, 10 սեպտեմբերի։ «Times» լրագիրը, խօսելով Թագաւոր Կայսրի Բալմորալ գնալու, իբրև մի մանաւոր այցելութեան մասին, նկատում է, թէ Նիկոլայ Կայսրից կախված կը լինի այդ այցելութեան ժամանակ քաղաքական խնդիրներ չօչափելը։ Հաւանական չէ, որ Սալսբիւրիի ներկայութիւնը քաղաքական նշանակութիւն ունենայ. «Daily News» և «Chronicle» յոյս են յայտնում, որ Սալսբիւրիին կաջողվի փարատել ոուսաց Կայսրի անվստահութիւնը դէպի բրիտանական դիտումները, թէև խոստովանում են, որ այդ անվստահութիւնը բնական է։

ՆԱՄԱԿ ՅՈՒՆԱՍՏԱՆԻՑ

—

Ա Թ Է Ն ք, 2/14 սեպտեմբերի

Հիմա որ կրետական խնդիրը վայրկենապէս լրացած կը համարվի, յոյները իրենց բոլոր ուշադրութիւնը դարձրել են դէպի Մակեդոնիա։ Վստահ եղէք որ ասոր համար յոյները ժամանակ չը կորսնցուցին տան և հինգ օրէ ի վեր։ Երեք օր առաջ երկու կազմակերպված խումբեր մեկնեցան Ա Թ Է Ն Ք Է Ն դէպի մակեդոնական սահմանագլուխը. ամեն մէկ խումբը 150-ի չափ կամաւորներէ բաղկացած է։ Երիտասարդ ֆրանսացի երկրաչափ մը՝ Էմիլ Անթուան անուն՝ այս օրերս Ա Թ Է Ն Ք Է Ն անցնելով ուղղուեցաւ դէպի Լարիսա, ուր դիտաւորութիւն ունի ինքն ալ կամաւորներէ խումբ մը կազմելով, թիւրքաց դէմ կռւի երթալու։ Կատաղի թշնամութեամբ մը վառված է այդ ֆրանսացին թուրք բարբարոսներու դէմ և ուիտած է իր կեանքը և հարստութիւնը զոհել կռւելով այդ վայրենի ցեղին դէմ, որուն գոյութիւնը ամօթ մը կը համարի քաղաքակիրթ Եւրոպայի։ Ա Թ Է Ն Ք-ի թերթերը մեծ գովեստներով կը խօսին այդ ֆրանսացիին վրա և կենթադրեն, որ բաւական մեծ դեր մը պիտի կրնայ խաղալ չնորհիւ իր հարստութեան։

Յոյն-մակեդոնական քոմիթէներ հիմա համոզված են թէ ամբողջ Մակեդոնիա չը կրնար միացիլ Յունաստանի հետ, ուստի տրամադիր են բաժնելու զայն Պուլկարիայի, Սերպիայի և Յունաստանի միջև, անչուշտ մեծագոյն բաժինը հանելով Յունաստանի։ Այդգամ մը որ բաժանումի համաձայնութիւն տիրէ այդ երեք պալքանեան տէրութիւններու մէջ, Մակեդոնիա չատ դիւրաւ կը դադարի Օսմանեան երկիր մը ըլլալէ։ Այս մասին բանակցութիւններ կըլլան արդէն։

Յոյներուն համար կարեւորագոյն խնդիրը կըրետակիրը չէ, այլ բուն իսկ մակեդոնական խնդիրը.

—Կրետէն միշտ մերն է, կըսէր կարեւոր յոյն անձնաւորութիւն մը. կղզին ամբողջ յոյներէ բաղկացած է, որոնց փափաքն է ժամ առաջ միանալ մայր հայրենիքի հետ. ասկէ զատ ուրիշ տէրութիւն մը չի կայ, որ աչք ունենայ Կրետէի վրա։ Ինչ որ կըսեն Անգղիայի մասին, բոլորովին զրպարտութիւն է. Կրետէ եթէ ոչ այսօր, վաղը անպատճառ Յունաստան պիտի ըլլայ բնական օրէնքով։ Մեզի համար բուն խնդիրը Մակեդոնիան է, մեր բոլոր ջանքերը անոր վրա կենտրոնացուցած ենք և Մակեդոնիայի համար աւելի տրամադիր ենք մեծամեծ զոհողութիւններ ընելու, որովհետեւ ինչ որ կորզենք Մակեդոնիայէն՝ կրնանք իրական չահ մը նկատել։

Պ. Ա.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Ինչպէս յայտնի է, ֆրանսիական հանրապետութեան նախագահը որ և է պաշտօնական համագումար չունի, այլ նա հագնում է միայն ֆրակ պաշտօնական դէպքերի ժամանակ։ Սակայն այժմ Թագաւոր Կայսրի այցելութեան առիթով, ֆրանսիական կառավարութիւնը անպարմար գտնելով ֆրակը, որոշել է որ հանրապետութեան նախագահը համազգեստ հագնի Թագաւոր Կայսրի ընդունելութեան ժամանակ։ Այդ համազգեստի համար պատրաստվել է նկար Պորիզի յայտնի դերձակ Ժէրբօ-Դիւշէյի ձեռքով։ Մինիստրները նոյնպէս պէտք է հագնեն համազգեստ դիպլոմատիական մարմնին յատկացրված ձեւով։

—Կ. Պոլսի «Աստար» լրագիրը հաղորդում է, որ պարսից Շահը այժմ զբաղված է բէֆորմներ մտցնելով զինուորական վարչութեան մէջ։ Զինուորական մինիստր նշանակված է Շուջաուս-Սալթանէ։ Մտադրութիւն կայ հեծելազօրք աւելացնել. Ադրբէյջանի նահանգը պէտք է տայ 50 000 հեծեալ զինուորներ։ Զինուորական վարչութեան անկատարելի ծախսերի համար որոշված է աւել մէկ միլիոն թուման։ Մտադրութիւն կայ փոխել ամբողջ զօրքի համազգեստը։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ԲԱԳՈՒ, 13 սեպտեմբերի։ Սեպտեմբերի 7-ին, Էնզելիում, հրդեհը ոչնչացրեց Լիանոզովի ձկնորսարանը, ձկնորսարանի շինութիւնները և իրեղէնները։ Վնասը կէս միլիոնի է հասնում։

ԲԱԼԼԱՏԷՐ, 13 սեպտեմբերի։ Սեպտեմբերի 12-ին կայսրը, կայսրուհին և Վիկտորիա թագուհին կառքով զբօսանք կատարեցին շրջականերում և թէյ խմեցին թագուհու կալուածքում գտնվող գիւղական տնակներից մէկում։ Երեկոյեան տեղի ունեցաւ ճաշ թագուհու մօտ։ Հրաւիրվածների թիւումն էին կէմբրիջեան դուքսը և կոմս Պալէն։ Սեպտեմբերի 21-ին Նոցա Մեծութիւնները ճանապարհ կընկնեն Պորտսմուտ։

ԴՐԼԶԴԷՆ, 13 սեպտեմբերի։ Ժամանեց Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլաեվիչ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 14 սեպտեմբերի։ Սեպտեմբերի 11-ին ստացվեց ներքին գործերի մինիստրի թոյլտուութիւնը՝ հրատարակելու Պետերբուրգում, առանց սկզբնական ցէնզուրայի, զրականական, քաղաքական և տնտեսական մի նոր մեծ լրագիր, «Міровые Отголоски» անունով։ Լրագիրը ամեն օր կը դուրս գայ երկու հրատարակութեամբ։ Տարեկան գինն է 16—17 բուրլի ճանապարհածախսով։ Հրատարակիչ և խմբագիր հաստատված է Կ. Վ. Տրուբնիկով։

ԲԱԼԼԱՏԷՐ, 13 սեպտեմբերի։ Զը նայելով անընդհատ անձրևին, թագաւորը, Ուէլսի իշխանը, Կոննաուտեան դուքսը և Ֆրանց Բատենբերգեան պրինցը աջող կերպով որս արեցին։ Կէսօրից յետոյ եղանակը պարզվեց։ Կայսրուհին Վիկտորիա թագուհու հետ զբօսանք արին կառքով։

ՄՕՍԿՎԱ, 14 սեպտեմբերի։ Բացված է կայսերական ինժեներական դպրոցը։

ՎԱՐՇԱՎԱ, 15 սեպտեմբերի։ Երեք օրվայ քննութիւնից յետոյ, «Муха» լրագրի նախկին խմբագիր Բուխնէր, որ դատվում էր գրականագէտ Գրէյնէրին սպանելու համար, արդարացրված է։

ՆԻԺՆԻ-ՆՈՎԳՈՐՈԴ, 15 սեպտեմբերի։ Այցելողների թիւը պակասում է։ Յայտարարված է, որ ցուցահանդէսում դրված մեծ զանգակը, Մոսկվայի գործարանից, ծախված է Պետերբուրգում տաճարի համար, որ պէտք է կառուցվի այն տեղում, ուր մահացու կերպով վիրաւորվեց Կայսր Ալէքսանդր Երկրորդը։

ԿՈՊԵՆՀԱԳԷՆ, 15 սեպտեմբերի։ Թագուհի Մարիա Ֆէոդորովնան սեպտեմբերի 15-ին ճանապարհ է ընկնում «Полярная Звѣзда» նաւով։

ՊԱՐԻԶ, 15 սեպտեմբերի։ Մէլին ճաշ տուեց ի պատիւ ռուսաց երկրագործութեան մինիստր Երմօլովի։

ՕՐՍՕՎԱ, 15 սեպտեմբերի։ Ֆրանց-Յովսէփ կայսրը ժամանեց այստեղ մինիստր Գոլուխովսկու ուղեկցութեամբ։

ԼՕՆԴՕՆ, 15 սեպտեմբերի։ Լորդ Սալսբիւրի սեպտեմբերի 14-ին կը գայ Բալմորալ և կը մնայ այնտեղ մինչև սեպտեմբերի 18-ը։

Կ. ՊՕԼԻՍ, 15 սեպտեմբերի։ Դեսպանները գրաւոր կերպով հաստատեցին Բէրովիչ փաշային Կրետէի գեներալ նահանգապետի պաշտօնում։

Զէրնօգորիական արտաքին գործերի մինիստր Վուլկովիչ յանձնեց սուլթանին իշխան Նիկոլայի նամակը այն բանի մասին, որ իշխանի գնալը Կ. Պոլիս յետաձգվում է մինչև իշխանուհի Ելէնայի պսակադրութիւնը։

ԲԱԼԼԱՏԷՐ, 15 սեպտեմբերի։ Կայսրը Կայսրուհին, Վիկտորիա թագուհին, Ուէլսի իշխանը, Եօրկի դքսուհին, Կոննաուտեան դուքսը և դքսուհին և ուրիշ Օգստոփառ անձինք, նոյնպէս և մարկիզ Սալսբիւրի ներկայ էին առաւօտ ժամասացութեանը, Նոցա Մեծութիւնները, թագուհու հետ միասին, գնացին եկեղեցի փակ կառքով։ Ժամասացութեան ժամանակ պատօրը աղօթք կարդաց՝ մաղթելով երկար և բաղդաւոր կեանք թագաւորին և թագուհուն և երջանիկ թագաւորութիւն։ Ժամասացութիւնից յետոյ Նոցա Մեծութիւնները և նոցա բարձրութիւնները վերադարձան ամրոց։

ՖԻԼԻՊՈՊՕԼ, 16 սեպտեմբերի։ Կ. Պոլսից ստացած տեղեկութիւններին նայած՝ այնտեղ կատարվեցին բազմաթիւ անային խուզարկութիւններ, որոնց պատճառները հետեւեալն էին. Մեհմեդի մզկիթում կպցրած վրդովեցուցիչ պրոկլամացեաները, Սկուտարիում երեսն հանած յանցաւոր դաւերը և երիտասարդ Թիւրքիայի կուսակցութեան ձեռքով սուլթանի դէմ ուղղած և Ժընեվում տպված մի բրոշիւրի տարածելը։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱ

Սեպտեմբերի 13-ին

Լօնդոնի վրա	10 ֆունտ արժէ. .	93 ր.	70 կ.
Բերլինի վրա	100 մարկ — . .	45 »	75 »
Պարիզի վրա	100 ֆրանկ — . .	— »	— »
Ոսկի	— — արժէ . .	7 »	50 »
Մաքսային կուպօններ	— . .	149 »	— »
Բօրսային դիսկօնտ	— . .	$5^3/_4$ »	7% »
4% պետական բէնտա		$98^1/_2$ »	— »
Ներքին 5% առաջին փոխառութ.		279 »	— »
— — երկրորդ —		$248^1/_2$ »	— »
5% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի		$208^1/_2$	— »
5% պետական երկաթուղ. բէնտա		$100^1/_2$	— »
4% նեղքին փոխառութեան . . .		$98^1/_4$	— »
$4^1/_2$% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի		$100^7/_8$ »	— »
Ազն. կալ. Պետ. բանկի խազարկութ.		— »	— »
$4^1/_2$% վկայակ. գիւղ. հող. բանկի		$100^7/_8$ »	— »
Փոխ. կրեդիտ. ընկեր. մոսկ. .		— »	— »
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. ընկերութեան օբլիգացիաներ.		$101^1/_4$ »	— »
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ.		$101^1/_2$ »	— »
Ոդեսայի — —		101 »	— »
Թիֆլիսի — —		$93^3/_8$ »	— »
Թիֆլիսի կալ. բանկի 6% — . .		102	— »
5% — — — . .		$99^1/_4$	— »
Քութայիսի — 6% — . .		102	— »
5% — — — . .		$99^1/_2$	— »

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ ԱՆԴՐԵԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, սիֆիլիս և վեներական հիւանդութիւնների։

Դ. Գ. ՁԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.

ԿԻՆ-ԲԺԻՇԿ ԴՈՒՇԱՅԵՎԱ-ԲՈՒԴԵՆԿՕ—10—11 ժ. կանանց և երեխ. հ.

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍՈՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։

Ա. Մ. ՓՈՒՂԻՆՆԵԱՆ—12—1 ժ. ներքին, երեխայոց և նեարդային հ. երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ։

Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—$1^1/_2$ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

ՊՐՕՏԱՍՈՎԻՉ—5—6 ժ. երեքշ. հինգշ. և շաբաթ։

Ա. Մ. ՓՈՒՂԻՆՆԵԱՆ—5—6 ժ. երկուշաբթի չորեքշաբթի և ուրբաթ։

Ա. Գ. ԳՈՒՐԿՕ—6—7 ժ. սիֆիլիսի, մէզի և սեռական օրգանների հ. ներքին և մարթի հ.

Ա. Գ. ԳՈՒՐԿՕ քիմիական և խոշորացուցական հետազօտութիւններ է անում մէզի, խիտ, արեան, կաթի և այլն։

Վճար 50 կ.։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

„ԱՐԱՔՍԻ“ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ

Որովհետև «Արաքսը» չարունակելու կամ դադարեցնելու վերջնական որոշումը կը պարզվի այնտեղ վերջերում, ուստի և հանդիսի երկրորդ գիրքը լոյս կը տեսնի դեկտեմբերի վերջին։

Մեր հասցէն՝ Петербургъ, Симеону Гуламирянцу. (№ 108) 1—2

Ղզլարից Աստրախան տեղափոխվելուս պատճառով հետս գրագրութիւն ունեցողներին խնդրում եմ հետեւեալ հասցէս. Астрахань, священнику соборной церкви, Геворку Мкртумянцъ.

Գէորգ քահանայ Մկրտումեանց
(№ 108) 1—3

Լոյս տեսաւ երեք առանձին տետրակներով
կայր երաժիշտ
ՆԻԿՈՂԱՅՈՍ ՏԻԳՐԱՆԵԱՆՑԻ
ՉՈՐՐՈՐԴ ԱԶԽԱՏՈՒԹԻՒՆԸ
ORIENTALWEISSEN
(ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐ) վերնագրով

Օր. 4. գործը պարունակում է իր մէջ եօթը հայկական պարեր և մի ժողովրդական երգ «Տուն արի»։ Ամեն մի տետրակի գինն է 50 կօպ, և ծախվում է Թիֆլիսում, Սուղանաճեանի, Լանկօյի և Ֆարինայի մագազիններում։

(№ 106) 3—5

ԶՐԿԻՆԵՆՑ Ս. ԿԱՐԱՊԵՏ եկեղեցու միջասեան երկսեռ դպրոցում աշակերտների և աշակերտուհիների ընդունելութիւնը սկսվում է ամիս 12-ից, իսկ պարապմունքը 20-ից։

Նախագահ հոգաբարձութեան՝
3—4 (№ 106) Արսէն քահ. Բազրատունի

ՄԱՍՆԱՒՈՐ ԳԻՄՆԱԶԻԱ ԿՐԵՅՄԱՆԻ

ՄՕՍԿՎԱՅՈՒՄ
(Հիմնարկված 1858 թ.-ին)
Հասցէն. Պետրովկա. տուն Նամարինայի

Այակերտները օգտվում են արքունական գիմնազիաների բոլոր իրաւունքներով։ Այս տարվայ մայիսին XXXI շրջանի այակերտները աւարտեցին գիմնազիան ու ստացան հասունութեան վկայական։ Նոր լեզուների ուսման վրա առանձին ուշադրութիւն է դարձրած. նրանց աւանդումն սկսվում է նախակրթարանից։

Գիմնազիայում պանսիոն կայ վերատեսչի անձնական կառավարութեան ներքոյ։

Գիշերօթիկների տարեկան վճարը 700 բուբլի է։ Այակերտների ընդունելութիւնը ամբողջ սեպտեմբեր ամսվայ ընթացքում։ (№ 108) 1—4

ՁԷԹ ԵՒ ՓՈՇԻ

ՊԱՂՆՁԷ ԱՌԱՐԿԱՆԵՐ ՄԱՔՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ր. ԿԷՕԼԷՐ ԵՒ ԸՆԿ. ԴՈՐԹՍՐԱՆԻ ՄՕՍԿՎԱՅՈՒՄ

ծախվում է ԱՄԵՆ ՏԵՂ, ԲՈԼՈՐ նշանաւոր առեւտրականների մօտ։

Այդ գործարանի ձէթով և փոշիով մաքրված պղնձէ առարկաները այնպիսի ողորկում և փայլ են ստանում, որ չեն ունեցել մինչև անգամ նոր եղած ժամանակ։ Սակայն դնելու ժամանակ հարկաւոր է զգուշանալ ուրիշ ծագում ունեցող այդպիսի արդիւնքներից, որովհետև վատ յատկութեան ձէթի գործածելը, կամ, որ գլխաւորն է, խոնաւ օդի մէջ ինքն իրան լուծվող վիէննայի կիրը (այսին քիմիայի չը դարձած) չատ հրապուրիչ է իր չահաւէտութեամբ և չատ յաճախ գործ է ածվում, այն ինչ յայտի է, որ այդ կերպ փոխված կիրը բոլորովին կորցրել է իր ոյժը։ (6) (№ 78) 3—3

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

ՏԱՍՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առևտրական կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատներ։

Ասանդելի առարկաք սրանք են՝ 1) Առևտրական գնահատութիւն, 2) Առևտրական թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն համրիչի վրա, 5) Առևտրական թղթակցութիւն, 6) Առևտրական և մուրհակի կանոնագրութիւն և 7) Գեղագրութիւն, վատ ձեռքի ուղղելը։

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 16-ից։ Ընդունելութիւնը սեպտեմբերի 2-ից, ամենայն օր, առաւօտեան 10-ից մինչև 11-ը, և երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սօլօլակում, Ալէքսանդր Փրիդօնովի տանը, № 9, Սերգիեվսկայա և Նաղօրնայա փողոցների անկիւնում։ Ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ձրի ապէս եղբ. Ծօլիանօվների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիք դիմում են՝ Тифлисъ, С. П. Мануэльянцу.

(Ե. շ.) № 73 19—25

ՍԵՒ ԵՒ ՍՊԻՏԱԿ ՊՂՊԵՂ

աղած, մաղող խուփ ունեցող թիթեղեայ տուփերում, նոյնպէս և թրաչ սրուակներում սեղանի համար, $^1/_{32}$-ից մինչև 1 ֆունտ։

Ր. ԿԷՕԼԷՐ ԵՒ ԸՆԿ. ՄՕՍԿՎԱՅՈՒՄ

ընկերութեան գործարանի աղուցքը ծախվում է ամեն տեղ, բոլոր նշանաւոր առևտրականների մօտ։

Աղած պղպեղին խառնուրդ անելը այնպիսի սոփորական երևոյթ է և այնքան չափից անց են կացրել, որ պատրաստ աղած պղպեղ յաճախ աւելի էժան է ծախվում, քան ոչ աղած, ամբողջ պղպեղը։ Իսկ Ր. Կէօլէր և Ընկ. ընկերութեան նշանը, ինչպէս բոլորին յայտնի է, ամենաճիշդ գրականն է ապրանքի լաւ յատկութեան համար։ (5) 3—3

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ-ՊԱՆՍԻՕՆ

Ա. ՏԷՐ-ՅԱԿՈՎԲԵԱՆԻ

(ՄԻԱԿ ԵՐԿՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՄԱՍՆԱՒՈՐ ՈՒՍՈՒՄՆ. ԹԻՖԼԻԶՈՒՄ)

Ուսումնարանում ընդունվում են երթևեկ, կիսաթոշակաւոր և զիշերօթիկ աշակերտներ։ Պատրաստվում են գիմնազիաների, կադետների կօրպուսի, զեմստվոյի, ռէալական և այլ ուսումնարանների համար։

Փոքր պատրաստականում երեխաները ընդունվում են առանց քննութեան, վեց տարեկանից սկսած. ընդունելութիւնը կը շարունակվի փոքր-պատրաստականում ամբողջ տարի, միւս դասարաններում ընդունելութիւնը կը կատարվի երեխաների նախապատրաստութեան համաձայն, նոյնպէս ամբողջ տարի։

Հասցէն. ТИФЛИСЪ. Гановская ул., № 11. 5—10
(№ 102) (Ե. հ.)

ԾԱԽՎՈՒՄ Է ԵՒ ՎԱՐՁՈՎ Է ՏՐՎՈՒՄ

Մի տուն, Ելիսավետինսկայա փողոցում, № 71։ Այդտեղ վարձով են տրվում բնակարաններ։ Պայմանների մասին հարցնել տանտիրոջից։ (№ 104) 3—3

ԴՊՐՈՑ-ՊԱՆՍԻՕՆ ԵՒ ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ

Ս. Վ. ԱՐՂՈՒԹԵԱՆ-ԵՐԿԱՑՆԱԲԱԶՈՒԿԻ
(Միքայէլեան փ. № 154)

Երեխաների ընդունելութիւնը օգոստոսի 20-ից. պարապմունքները կը սկսվեն սեպտեմբերի 2-ից։ (№ 95) 5—5

Дозволено цензурою, Тифлисъ, 16 Сентября 1896 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. кав.